

## 2. Ընտրական հանձնաժողով

2.1

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը հայտարարությունների միջոցով ապահովում է քաղաքացիական հասարակության լայն իրազեկումը Ընտրական հանձնաժողովի ձևավորման համար:

2.2

Ընտրական ողջ գործընթացն իրականացվում է քաղաքացիական հասարակության կողմից ինքնաառաջադրված և/կամ առաջադրված անձանց շրջանակից ընտրված (ՀՄՀ-Հայաստանի տեխնիկական աջակցությամբ) ընտրական հանձնաժողովի կողմից՝ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի աջակցությամբ:

2.3

Ընտրական հանձնաժողովը կազմված է առավելագույնը 15, սակայն ոչ պակաս քան 7 անդամներից: Եթե ընտրական հանձնաժողովի անդամության թեկնածուների թիվը 15-ից ավել է, ապա ընտրական հանձնաժողովի 15 անդամները կորոշվեն վիճակահանությամբ:

2.4

Ընտրական Հանձնաժողովն իր կազմից ձայների պարզ մեծամասնությամբ ընտրում է Հանձնաժողովի նախագահ և քարտուղար: Ընտրական Հանձնաժողովի նիստերն իրավագոր են բոլոր անդամների մասնակցության դեպքում: Ընտրական հանձնաժողովի նիստերը բաց են հանրության ցանկացած դիտարկման համար: Շահագրգիռ կազմակերպությունները պատշաճ իրազեկվում են Ընտրական հանձնաժողովի նիստերի մասին:

2.5 Ընտրական Հանձնաժողովի անդամներն կարող են ինքնաբացարկ ներկայացնել մինչև ՇԽ հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

2.6

Ընտրական հանձնաժողովն իրականացնում է մասնակիցների գրանցումը ըստ ներկայացված հայտերի, կազմակերպում և իրականացնում է ՇԽ/ԿԽ անդամների ընտրության նպատակով անցկացվող քվեարկությունը և ամփոփիչ փաստաթղթերի մշակումը՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունը և հրապարակայնությունը:

2.7

Ընտրական հանձնաժողովը լուծարվում է ընտրությունների օրվանից մեկ ամիս անց: Եթե ընտրություններից մեկ ամիս անց առկա են վեճեր, ապա ընտրական հանձնաժողովի լիազորությունները երկարաձգվում են մինչև վեճերի լուծումը: Ընտրություններից հետո ընկած ժամանակահատվածում Ընտրական հանձնաժողովն է պատասխանատու ընտրությունների առնչությամբ ծագած ցանկացած խնդիր դիտարկելու և համապատասխան քայլեր ձեռնարկելու համար: :

2.8

Ընտրական հանձնաժողովի անդամները և վերջիններիս կողմից ներկայացվող կազմակերպությունները չեն կարող առաջադրվել որպես ՇԽ/ԿԽ անդամության թեկնածուներ: Ընտրական հանձնաժողովի անդամները իրավունք ունեն հանդես գալ որպես ընտրող, եթե առաջադրվել են իրենց համապատասխան կազմակերպությունների կողմից՝ սույն կարգում նկարագրված մասնակցության իրավունքի առկայության պարագայում: